# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Բյուրեղավան 12.05.2022թ.

2022թ. մայիսի 12-ին, ժամը 12.00 ք. Բյուրեղավան քաղաքի մշակույթի տանը տեղի ունեցան հանրային լսումներ՝ «ՍՈԼԱՆՈՒՄ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվող ալյումինի ձուլման արտադրամասի նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ:

**Օրակարգ՝**

Հայտի համառոտ ներկայացում

Հարցեր ու պատասխաններ

Նյութեր

Որոշման ընդունում

Հանրային լսումների մասնակիցների ցուցակը կցվում է:

**Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ Միշա Եղիազարյանը** ներկայացրեց հանրային լսումների նպատակը: Նշեց, որ իրականացվում է հանրային քննարկման երկրորդ փուլը: Քննարկման վերաբերյալ ծանուցումը իրականացվել է **«Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»** ՀՀ Կառավարության N1325-Ն որոշման համաձայն, տեղադրվել է համայնքի էլեկտրոնային կայք-էջում՝ հանրային քննարկումներն իրականացնելուց տասն օր առաջ:

Կ. Հարությունյանը՝ **Շրջակա միջավայրի նախարարության մասնագետ,** ներկայացրեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի դրույթները, ներկայացրեց հայտի բնապահպանական մասը, փորձաքննության ընթացակարգը: Նշեց նախնական գնահատման հայտի փորձաքննության մասնակից ստորաբաժանումներին և գերատեսչություններին:

Հ. Նիկողոսյանը՝ **նախնական գնահատման հայտ մշակողը,** համառոտ ներկայացրեց նախնական գնահատման հայտը, նշեց, որ, ելնելով ալյումինի այսօրվա պահանջարկից, «ՍՈԼԱՆՈՒՄ» ՓԲԸ-ն նախատեսում է գործարկել ալյումինի ձուլման արտադրամաս՝ Բյուրեղավան քաղաքի արդյունաբերական գոտում, որը տեղադրված վառարանը աշխատելու է գազով, տարեկան 1.000տ արտադրողականությամբ, պահպանելով սանիտարապաշտպան գոտին, նախնական հաշվարկների համաձայն արտանետումների քանակը ատմոսֆերայում գտնվելու է սահմանային թույլատրելի նորմերում: Ջուրն օգտագործվելու է միայն կաղապարների հովացման համար, աշխատելու են 20 բանվոր 3 հերթափոխով:

**Հարց՝ Կարեն Հարությունյան** – ամենամոտ բնակելի տանից հեռավորությունը պահպանվու՞մ է:

**Պատասխան՝ Հ. Նիկողոսյան** – այո, պահպանվում է:

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Վոլոդյա Հայրապետյանը հարցրեց, թե որքան է բնակելի տան հեռավորությունը - պատասխան, ըստ կադաստրային տվյալների ամենամոտ տունը գտնվում է, ավելի քան 300 մ հեռավորության վրա

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ

**Որոշեցին** հավանություն տալ ներկայացված հայտին, նշելով, որ նոր աշխատատեղերը այսօր սոցիալական հիմնահարցերի լուծման համար շատ կարևոր են և կարևոր է, նաև ցանկացած նախատեսվող և կազմակերպվող արտադրության պարագայում բացառել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը:

Բյուրեղավանի համայնքի ղեկավարի տեղակալ Մ. Եղիազարյան

«ՍՈԼԱՆՈՒՄ» ՓԲԸ տնօրեն՝ Ն. Նարգիզյան